

ՀՌՈՒԹԻ ԳԻՐՔ

Տասներորդ հաղորդում

**Հռութի իր համար նպատակ է ընտրում,
օգտվում է իր իրավունքից,
իր համար հանգիստ է փնտրում
և պարզև է ստանում Աստծու տնտեսության համար**

Գրվածքների ընթերցում. Հոթ 1-4

- I. Գատավորացը գիրք է Իսրայելի թշվառ պատմության մասին՝ խավար և զարշահոտ. Հռութի գիրքը, որպես Գատավորաց գրքի հավելում, գրառում է մի գույզի գերազանց պատմության մասին՝ լուսավոր և անուշահոտ. այս պատմության մեջ գլխավոր դերակատարը՝ Հռութը, նման է փշոտ թփերի մեջտեղում աճած շուշանի և խավար գիշերում առկայծող աստղի՝ Հոթ 1-4:
- II. Հռութի գրքի 1-ին գլուխը պատմում է այն մասին, որ Ելիմելեքը մի կողմ շեղվեց՝ թողնելով Աստծու տնտեսության մեջ եղող հանգիստը (խխ. 1-2), Նոյեմին վերադարձավ Աստծու տնտեսության մեջ եղող հանգստին (խխ. 3-7, 19-22), իսկ Հռութն իր համար նպատակ ընտրեց (խխ. 8-18).
- Ա. Հռութի գիրքը հանգստի մասին գիրք է. շաբաթի հանգիստը Քրիստոսն է՝ որպես մեր հանգիստը, որի նախատիպը Քանանի բարի երկիրն է՝ Երկ Օր 12:9, Եբր 4:8-9.
 1. Աստված յոթերորդ օրը հանգստացավ, որովհետև հասել էր այն բանին, ինչ ցանկանում էր. Աստծու սրտի ցանկությունը երկրի վրա մարդ ձեռք բերելն էր, որը կարտահայտեր Իրեն Իր պատկերով և կներկայացներ Իրեն Իր տիրակալությանը՝ Ծնդ 1:26-28, Հոմ 8:28-29, Բ Կրթ 3:18, Հոմ 5:17, 21, Հյտ 5:9-10, 22:5:
 2. Հին Կտակարանում բարի երկիրը հանգիստ էր, որովհետև այնտեղ կարող էր կառուցվել տաճարը. տաճարը Իսրայելի զավակների՝ բարի երկիրը մտնելու վերջնական ավարտունությունն էր. տաճարը ստանալով՝ Աստված կարող էր ձեռք բերել Իր արտահայտությունն ու Իր ներկայացուցչությունն Իր թագավորության, կառավարության և ղեկավարության համար՝ Գ Թգ 8:1-11:
 3. Քրիստոսը սրբերի համար հանգիստ է երեք փուլով.
 - ա. Եկեղեցու դարաշրջանում երկնային Քրիստոսը՝ Նա, ով արտահայտեց, ներկայացրեց և բավարարեց Աստծուն և ով հանգստանում է Իր աշխատանքից և նստած է Աստծու աջ կողմը երկինքներում, մեզ համար հանգիստն է մեր հոգում. որպես մեր հանգիստը՝ Նա մեր կատարյալ խաղաղությունն ու լիակատար բավարարությունն է՝ Մտթ 11:28-29:
 - բ. Հազարամյա թագավորության մեջ, երբ Սատանան այս երկրի վրայից հեռացված լինի (Հյտ 20:1-3), Աստված արտահայտված, ներկայացված և բավարարված կլինի Քրիստոսի և հաղթող

սրբերի կողմից. այդժամ Քրիստոսը, թագավորությամբ հանդերձ, ավելի լիարժեք հանգիստը կլինի հաղթող սրբերի համար, ովքեր կլինեն Նրա համաթագավորները (Խխ. 4, 6) և կկիսեն ու կվայելեն Նրա հանգիստը:

գ. Նոր երկնքում և նոր երկրում, երբ բոլոր թշնամիները, ներառյալ մահը՝ վերջին թշնամին, Նրան ենթարկված լինեն (Ա Կրթ 15:24-27), Քրիստոսը՝ որպես ամենահաղթ Անձը, հավիտյան ամենալիարժեք հանգիստը կլինի Աստծու բոլոր փրկագնվածների համար:

Բ. Բարի երկիրը թողնելով՝ Ելիմելեքը շեղվում էր Աստծու տնտեսության մեջ եղող հանգստից՝ այդպիսով իրեն կտրելով Աստծու տնտեսությունից. նա մի կողմ շեղվեց՝ հեռանալով Բեթղեհեմից՝ եկող Քրիստոսի ծննդավայրից (Մք 5:2, Ղկա 2:4-7), որ Հուդայի մեջ էր՝ բարի երկրի լավագույն մասում (Ծնդ 49:8-10, Ելց 3:8բ, Երկ Օր 8:7-10), դեպի Մովաբը՝ կռապաշտության երկիրը (Դ-տվ 10:6):

Գ. Մուրբ Երկիրը վերադառնալով՝ Նոյեմին Մովաբից՝ կռապաշտության երկրից, վերադարձավ Աստծու տնտեսության մեջ եղող հանգստին, դեպի Հուդան՝ Էմմանուելի երկիրը (Եսյ 8:8), գալով Բեթղեհեմ՝ Քրիստոսի ծննդավայրը (Հռթ 1:19ա, 22բ). նա վերադարձավ Հռութի՝ իր հարսի հետ, որին Աստված տվել էր նրան՝ Քրիստոսի վերաբերյալ Իր տնտեսությունն իրագործելու համար (խ. 22ա):

Դ. Հռութն իր համար ընտրեց Աստծու ընտրյալների հետ Քրիստոսի վայելքին մասնակցելու նպատակը, և նա Քրիստոսի կարևոր նախնիներից մեկը դարձավ, մարդ, որն օգնեց մարդկության մեջ ծնելու Քրիստոսին. սա նրա ընտրելն էր Աստծուն և Նրա թագավորությունը՝ Քրիստոսի վերաբերյալ Աստծու տնտեսությունն իրագործելու համար՝ Մտք 1:5-6:

III. Հռութի գրքի 2-րդ գլուխը խոսում է Հռութի մասին՝ ծագումով հեթանոսուհու, որը վերադարձել էր Աստծուն՝ օգտվելով Աստծու ընտրյալների ժառանգության հարուստ արգասիքին հաղորդ լինելու իր իրավունքից.

Ա. Ունենալով պանդխտի, աղքատի և որբևայրու եռակի կարգավիճակ՝ Հռութն օգտվեց հունձքից մնացած հասկերը հավաքելու իր իրավունքից. նրա՝ հասկ հավաքելը ոչ թե մուրացկանություն էր, այլ նրա իրավունքը:

Բ. Հունձքի վերաբերյալ Աստծու հրամանագիրն այն էր, որ Եհովան կօրհներ Իսրայելի զավակներին, եթե նրանք իրենց դաշտերի անկյուններն ու հունձքից հետո մնացած հասկերը թողնեին աղքատներին, պանդուխտներին, որբերին և որբևայրիներին՝ Ղուց 23:22, 19:9-10, Երկ Օր 24:19:

Գ. Բոռը ենթարկվեց այդ հրամանագրին, ինչը Եհովայի հանդեպ իր մեծ հավատքի վկայությունն էր. Աստծու գերիշխանությամբ այս հրամանագիրը, կարծես, գրվել էր մեկ անձի՝ Հռութի համար:

Դ. Ճիշտ ինչպես Հռութը բարի երկիրը գալուց հետո բարի երկրի արգասիքը վայելելու իրավունք ունեցավ, այնպես էլ մենք, Քրիստոսին

ՀՈՌԻԹԻ ԳԻՐՔ

ներհավատալով, իրավունք ունենք վայելելու Նրան՝ որպես մեր բարի երկրի. այն, որ Հռութը օգտվեց բարի երկրի արգասիքը ձեռք բերելու և դրան տիրելու իրավունքից, նշանակում է, որ Քրիստոսին ներհավատալուց և Նրան մեր «միացած» հոգում օրգանապես միանալուց հետո (Հռմ 8:16, Ա Կրթ 6:17) մենք պետք է սկսենք ձգտել Քրիստոսին, որպեսզի ձեռք բերենք, տիրենք, փորձառաբար ապրենք ու վայելենք Նրան (Փլպ 3:7-16):

- Ե. Հռութի գիրքը պատկերում է մեղավորների՝ Քրիստոսին մասնակցելու և Քրիստոսին վայելելու ճանապարհը, դիրքը, որակավորումն ու իրավունքը. ըստ Աստծու նախասահմանության՝ մենք՝ Քրիստոսին ներհավատացողներս, որակավորվել ենք և Քրիստոսին վայելելու մեր իրավունքը պահանջելու դիրք ենք ձեռք բերել (Կդս 1:12, Հյտ 2:7, 22:14):
- Զ. Որպես պատմվածք՝ Հռութի գիրքը սքանչելի է, հուզիչ, սրտառուչ և գրավիչ. այս անուշահոտ պատմության 2-րդ գլխում չորս նախատիպ է ակնարկվում.
 - 1. Բոռը՝ ունեցվածքով հարուստ մարդ (խ. 1), Քրիստոսի նախատիպն է, ով հարուստ է աստվածային շնորհքով (Բ Կրթ 12:7-9):
 - 2. Աստծու խոստացած բարի երկրի դաշտը (Հոթ 2:2-3) համարվանդակ Քրիստոսի նախատիպն է, ով Աստծու ընտրյալների կենսամատակարարման համար նախատեսված բոլոր հոգևոր և աստվածային արգասիքների աղբյուրն է (Փլպ 1:19-21ա):
 - 3. Գարին և ցորենը (Հոթ 2:23) Քրիստոսի՝ որպես թե՛ Աստծու, թե՛ Նրա մարդկանց համար կերակուր պատրաստելու նյութի նախատիպն են (Գտց 2, Հվի 6:9, 33, 35):
 - 4. Այն, որ Հռութը՝ մովաբացի մի կին, Աստծու խոստումներից օտարացած հեթանոս մի մեղավոր (Երկ Օր 23:3, հմմտ Եփս 2:12), իրավունք ստացավ հաղորդ լինելու Աստծու ընտրյալների հունձքից մնացած հասկերին, այն բանի նախատիպն է, որ հեթանոս «շնիկներն» արտոնություն ստացան հաղորդ լինելու Քրիստոսին՝ որպես սեղանի տակի փշրանքների, ով զավակների՝ Աստծու ընտրյալների բաժինն է (Մտթ 15:21-28 և 27-րդ խոսքի ծթգ 1):

IV. Հռութի գրքի 3-րդ գլուխը խոսում է Հռութի՝ իր համար հանգիստ փնտրելու մասին.

- Ա. «Նոյեմին՝ նրա [Հռութի] սկեսուրը, նրան ասաց. Աղջիկս, ես քեզ համար պետք է հանգստի վայր փնտրեմ, որ լավ լինի քեզ համար»՝ խ. 1.
 - 1. Նոյեմին գիտակցում էր, որ Բոռը լավագույն ամուսինը կլիներ Հռութի համար. ուստի նա հանդես եկավ որպես «միջնորդ», որպեսզի Հռութին մղի ամուսնանալու:
 - 2. Նոր Կտակարանի իսկական սպասավորները նման են Նոյեմին այն բանում, որ նրանք Քրիստոսին հավատացողներին մղում են սիրելու Նրան՝ որպես իրենց Փեսայի, որպեսզի նրանք ընդունեն Նրան՝ որպես իրենց Ամուսնու՝ Բ Կրթ 11:2, Հյտ 19:7, 21:9-10:

3. Մենք կարող ենք հանգիստ ունենալ միայն Քրիստոսին՝ որպես մեր Ամուսնու, ընդունելով. մենք պետք է ճանաչենք Նրան՝ որպես մեր Ամուսնու, և ընդունենք Նրան՝ որպես մեր Ամուսնու՝ ապրելով Նրա հետ ամենասերտ ու ամենամտերմիկ հպման մեջ՝ Ա Կրթ 2:9, հմմտ 16:22:
4. Եթե ամուսնանանք Քրիստոսի հետ՝ Նրան՝ որպես մեր Ամուսնու, ընդունելով, մեր կյանքը կփոխվի. մենք կգիտակցենք, որ պետք է ունենանք կնոջ հավատարմություն, և մենք կսովորենք վայելել Քրիստոսին՝ որպես մեր կյանքի և մեր անձի՝ քայլելով և վարվելով Նրա հետ միասնության մեջ՝ Բ Կրթ 2:10:

Բ. Բարի երկիրը գալով և դրա հարուստ արգասիքը վայելելու իր իրավունքից օգտվելով՝ Հռութը դեռ տան կարիք ուներ, որպեսզի կարողանար հանգիստ ունենալ. այսպիսի հանգիստը կարող է միայն ամուսնության միջոցով առաջանալ.

1. Մենք, հնարավոր է, փրկվել ենք ու սիրում ենք Տիրոջը, բայց որպեսզի մեր հանգստի համար տուն ունենանք, պետք է ամուսնանաք Տեր Հիսուսի հետ՝ ընդունելով Նրան՝ որպես մեր Ամուսնու, և Նրա հետ միասին ապրելով եկեղեցում՝ որպես մեր տանը՝ Հռմ 7:4, Բ Կրթ 11:2, Եփս 5:25-27:
2. Քրիստոսը՝ որպես մեր Ամուսինը, և եկեղեցին՝ որպես մեր տունը, լիակատար միավոր են պատշաճ և բավարար հանգիստ ունենալու համար (լս. 32):

Գ. Եթե այստեղ ասվածը դիտարկենք Մտք 1:5-6 և 16-րդ խոսքերի լույսի ներքո, ապա այն, որ Հռութն իր համար հանգիստ էր փնտրում, իրականում ծննդաբանության գիծը շարունակելու համար էր, որը հանգեցրեց Քրիստոսի ծննդին:

Դ. Բոսը Հռութին ասաց. «Ես քո ազգականն եմ, բայց ինձնից ավելի մոտ ազգական էլ կա»՝ Հռք 3:12.

1. Այս խոսքում Հռութի ամուսնու առաջին ազգականը՝ Հռութի ամենամոտ ազգականը, մեր բնական մարդու նախատիպն է, ով չի կարող մեզ փրկագնել և մեզ չի ուզում փրկագնել մեր հին մարդու պարտքից (մեղքից) (4:1-6):
2. Բոսը՝ Հռութի ամուսնու երկրորդ ազգականը, Քրիստոսի նախատիպն է, ով հաղորդ եղավ արյանը և մսեղիին (Եբր 2:14), որպեսզի լինի մեր Ազգականը, և ով կարող է մեզ փրկագնել մեր մեղքից, վերականգնել Աստծու ստեղծագործության մեջ մեր բնական մարդու կորսված իրավունքը, լինել մեր նոր Ամուսինը մեզ հետ Իր աստվածային, օրգանական միության մեջ և ընդունել մեզ որպես Իր զույգն Իր մեծացման համար (Հռք 4:7-13):

V. Հռութի գրքի 4-րդ գլուխը խոսում է Հռութի՝ Աստծու տնտեսության համար պարզ և ստանալու մասին.

Ա. Աստծու տնտեսության համար Հռութի պարզևի մի մասն այն էր, որ նա ձեռք բերեց փրկագնող ամուսին, որ Քրիստոսի՝ որպես հավատաց-

ՀՈՌԻԹԻ ԳԻՐՔ

յալների փրկագնող Ամուսնու նախատիպն է. մենք՝ հավատացյալներս, այժմ Ամուսին ունենք, ով մեր հավիտենական, ներկա և ամենօրյա Փրկագնիչն է, որ մեզ ազատում է, փրկում է, ազատագրում է մեր բոլոր փորձանքներից:

Բ. Բացի փրկագնող ամուսին ձեռք բերելուց՝ Հռութը փրկագնվեց իր մեռած ամուսնու ամբողջ պարտքից (Խխ. 1-9). սա այն բանի նախատիպն է, որ հավատացյալները փրկագնվում են իրենց հին մարդու մեղքից.

1. Հռմ 6:6-ի և 7:2-4-ի համաձայն՝ մեռած ամուսինը՝ մեր հին ամուսինը, մեր հին մարդն է. Աստված մեզ ստեղծել էր, որպեսզի մենք Իր կինը լինեինք, բայց մենք ապատամբեցինք Նրա դեմ. մենք հրաժարվեցինք Նրանից և ամուսնու դիրք ստանձնեցինք:

2. Մեր մեղսալի ամուսինը մեզ բազմաթիվ պարտքերով ծանրաբեռնեց, բայց այն օրը, երբ ամուսնացանք Քրիստոսի հետ, մենք Ամուսին ստացանք, ով մեր ամենակարող, ամենագոր Փրկագնիչն է. մեզ բոլորիս անհրաժեշտ է Քրիստոսը՝ որպես այսպիսի Ամուսին, և մենք պետք է սովորականի պես գանք Նրան և պարզապես ասենք. «Տե՛ր Հիսուս, ես Քո կարիքն ունեմ»:

Գ. Հռութի ստացած պարզևի մեկ այլ տեսանկյուն էլ այն է, որ նա ծննդաբանության մեջ հանգուցային նախնիներից մեկը դարձավ՝ առաջացնելով Դավթի թագավորական տունը՝ Քրիստոսին առաջացնելու համար (Հռթ 4:13բ-22, Մտթ 1:5-16). սա ցույց է տալիս, որ նա համարվանդակ և համընդգրկուն ձեռքբերում ունեցավ՝ Քրիստոսին մարդկային ցեղի մեջ բերելու դիրքով և ընդունակությամբ հանդերձ. ուստի նա մեծ օղակ է այն շղթայի մեջ, որ Քրիստոսին բերում է երկրի ամեն մի անկյուն:

Դ. Հռութը ոչ միայն ծննդաբանության մեջ հանգուցային նախնիներից մեկը դարձավ Քրիստոսին առաջացնելու համար, այլև շարունակեց Աստծու ստեղծած մարդկության գիծը Քրիստոսի մարմնացման համար. Քրիստոսի մարմնացումը կապված էր Նրա՝ հավիտենությունից ժամանակի մեջ բերվելու և Իր աստվածայնությամբ հանդերձ մարդկայնության մեջ բերվելու հետ.

1. Մեր քրիստոնեական կյանքի ամեն օրը պետք է Քրիստոսի մարմնացման շարունակությունը լինի, որտեղ առաջանում է Քրիստոսը, որպեսզի Նա ծնվի ուրիշների մեջ այն բանի արդյունքում, որ մենք նրանց մեջ ենք բաշխում Քրիստոսին՝ որպես Հոգու՝ Բ Կրթ 3:6:

2. Որպեսզի սա տեղի ունենա, մենք բոլորս պետք է խոսենք Քրիստոսի անունից, բարբառենք Քրիստոսին և մեր խոսելով ուրիշների մեջ Քրիստոս ներդնենք. Քրիստոսին այսկերպ սպասավորելը, անշուշտ, նյութափոխանակորեն կփոխի մեզ և նրանց, ում համար մենք հոգում ենք, Նրա պատկերին մեր փոխակերպվելու համար՝ Խ. 18, 4:1: